



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» նոյեմբերի 2019 թվականի N:300 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱՊՅԱՆԻՆ, ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ  
ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի նոյեմբերի 15-ի զեկուցագիրը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին 2019 թվականի նոյեմբերի 19-ին, 20-ին և 21-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայր՝ «Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով:
2. Մուշեղ Մուրադյանին, Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկական հասցեով:

